



# Պարույր Սևակ

## Անհաշտ մտերմություն

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ ՊԱԼԱՏԸ

I

Ծիծեռնակների և սարյակների շուտասելուկից

Թորգումն արթնացավ: Դեռ արև չկար:

Հեռվում երկինքը շառագունել էր արևածագից՝

Գծելով ծանոթ մի բնանկար:

Կարճագույն մուժը, մացառների մեջ ծվեններ թողած,

Դանդաղ ցրվում էր այզուց ու բակից,

Լայն պատշգամբում ավելուկների հյուսերը կանաչ

Օրորվում էին մեղմիկ ու հանգիստ:

Բացվում էր օրը: Գյուղն արթնացել էր արևից առաջ:

Նոր թխած հացի բուրմունք էր գալիս:

Պարզորոշ լսվեց հորթուկին կանչող մի կովի բառաչ,

Մի բահ զրնգաց՝ զարնվելով քարին:

Թորգումը նստեց: Ինչ-որ ծանրություն ճնշում էր հոգին,

Ծանրացած գլխում կարծես թե կար մեզ:

Այդպես է լինում հետևյալ օրը թունդ զինարբուրի:

Իսկ նա չէր խմել: Որտե՞ղ էր երեկ:

Եվ հիշեց հանկարծ, ու քունը փախավ: Վեր թռավ տեղից:

Արևն էր ելնում պոնկից լեռան:

Լեռնալանջերին թառած արտերը կանաչադեղին

Շեղեցին մի պահ մտքերը նրա:

Շուտով դեզերը շուրջպար կրոնեն արձակ կալերում

(Ոսկեվորվում են արտերը արդեն),

Վրա կհասնեն բերքահավաքի օրերը եռուն,

Մինչ շենքն ակումբի անավարտ է դեռ:

Եվ մոռանալով այն ծանրությունը, որ մի պահ առաջ

Ճնշում էր հոգին, ժպտաց ինքնազնի:

Շրեգ շինության կամարները կոր և թևատարած

Ողորկ սյուները կապույտ երանգով:

Վերստին նրա սիրտը լցրեցին խնդությամբ այն տաք,

Որ լավ ծանոթ է սիրահարվածին:

Եվ նախագահի՝ Թորգոնի սրտով անցավ մի խայտանք,

Երբ աչքը ընկավ շենքի զանգվածին:

Ակումբ էր կոչվում, բայց իրականում պալատ էր շրեղ,

Սյունաշարավոր շրջանը նրա

Գյուղի կենտրոնում բազմել էր խրոխտ ու կամարագեղ,

Ինչպես նոր բլուր՝ բլուրի վրա:

... Երբ պատերազմը վերջացավ փառքով, երբ վերադարձան

Հաղթողներն իրենց տները նորից,

Ամեն գյուղի մեջ բարձրացավ մի սեղ Աղբյուր-հուշարձան՝

Սրբատաշ բազալտ և կամ տուֆ քարից:

Թորգոնն էլ հայտնի իր սովորությամբ՝ կառուցել տվեց

Իր լավագույնը լավերի շարքում.

Ուրիշներինը մեկ ծորակ ուներ, իսկ սա ուներ՝ վեց,

Մեկ կամարի տեղ սա ուներ երկու:

Հետո շինության գովելի տենդը գյուղից գյուղ անցավ.

«Նոր ուղին» շինեց նոր գրասենյակ,

Ամբողջ մի տարի խոսք ու զրույցի առարկա դարձավ

«Կարմիր դրոշի» ակումբը մենակ:  
Վարդաձորեցիք ետ չմնացին իրենց դրացուց.  
Տանձուտն իր հերթին հետևեց նրան:  
Ամեն մի կոլխոզ ճարտարությունն իր դրել էր ի ցույց:  
Մրցման մեջ էին գյուղերն հարևան:  
Սովետաշենք դեռ չէր երևում: Չգիտես ինչո՞ւ,  
Դեռ դանդաղում էր Թորգոմը, լոռում:  
Սակայն շրջանում շատ լավ հայտնի էր, որ ամեն ինչում  
Նա լավագույնն է լավի մեջ սիրում:  
Նա սպասում էր համագյուղացի ճարտարապետին,  
Որին և հայտնել բավականությամբ,  
Թե կառուցելիք իր նոր ակումբը անպատճառ պիտի  
Իր ձևով անշուշտ, ոչ թե մեծությամբ,  
Խիստ նման լինի փառահեռ շենքին այն օպերայի,  
Որ կառուցվել է մայրաքաղաքում:  
Փոքրիկ մի Մասիս՝ նա պիտի ուղիղ Մասիսին նայի,  
Միակը լինի ողջ շրջակայքում:  
Նա պիտի բազմի գյուղի կենտրոնում, բլուրի վրա,  
Իսկ հետագայում՝ ճարտագայթած  
Լայն փողոցները պիտի զան հեռվից և հասնեն նրան՝  
Նոր գյուղին տալով մեծ անիվի ձև:  
Գրասենյակը, դպրոցը, շենքը հիվանդանոցի  
Ուրվագծում են արդեն հենց հիմա  
Մոտավոր տեսքը գյուղի առաջին այն նոր փողոցի,  
Որ և կասֆալտվի՝ քաղաքի նման:  
Նորավարտ հսկա պահեստի շենքով սկիզբ է առնում  
Երկրորդ փողոցը, որ արդեն, նայի՛ր,  
Էլեկտրադացով ու դարբնոցով է հիմա վերջանում  
Եվ ձգտելու է այս օպերային...  
Իսկ բնակելի տների շարքը կձգի հետո,

Կոլխոզը քիչ էլ երբ հարստանա:  
Ամեն ինչ կլինի, ամեն ինչ, այո՛, միայն թե հերթով:  
Նախ՝ այսպես պալատը պիտի վերջանա:  
Խիստ նման լինի փառահեղ շենքին այն օպերայի,  
Որ կառուցվել է մայրաքաղաքում:  
Փոքրիկ մի Մասիս՝ նա պիտի ուղիղ Մասիսին նայի,  
Միակը լինի ողջ շրջակայրում:  
Նա պիտի բազմի գյուղի կենտրոնում, բլուրի վրա,  
Իսկ հետագայում՝ ճառագայթաձև  
Լայն փողոցները պիտի գան հեռվից և հասնեն նրան՝  
Նոր գյուղին տալով մեծ անիվի ձև:  
Գրասենյակը, դպրոցը, շենքը հիվանդանոցի  
Ուրվագծում են արդեն հենց հիմա  
Մոտավոր տեսքը գյուղի առաջին այն նոր փողոցի,  
Որ և կասֆալտվի՝ քաղաքի նման:  
Նորավարտ հսկա պահեստի շենքով սկիզբ է առնում  
Երկրորդ փողոցը, որ արդեն, նայի՛ր,  
Էլեկտրաղացով ու դարբնոցով է հիմա վերջանում  
Եվ ձգտելու է այս օպերային...  
Իսկ բնակելի տների շարքը կձգվի հետո,  
Կոլխոզը քիչ էլ երբ հարստանա:  
Ամեն ինչ կլինի, ամեն ինչ, այո՛, միայն թե հերթով:  
Նախ՝ այսպես պալատը պիտի վերջանա:  
Իսկ այդ պալատը, թեկուզ անցել է մեկ ու կես տարի,  
Դեռ նոր է միայն իր ձևն ստանում:  
Շինանյութերով ծածկված բլուրի բարձր կատարին  
Նրա մի հարկն է միայն բարձրանում:  
Դեռ ստիպված ես բերքահավաքի եռուն շրջանում  
Եվ բրիգադից շինարարական  
Շատերին վերցնել, որ հնահի գնան, աշխատեն կալում՝

Բրիգադներում դաշտավարական:

Վրա է հասնում ամառը նորից: Պետք է շտապել,

Որ սյունաշարը գոնե վերջանա...

Եվ «բարի լույս»-ը ստիպեց հանկարծ նրան սթափվել:

Աղջիկն էլ կանգնած Թորգոնի առաջ:

- Ինչպե՞ս ես, հայրի՞կ, ի՞նչ է պատահել, ինչ շա՞տ ես քնում, -

Վերիիշել տվեց ձայնը աղջոկա

Անցյալ գիշերվա վարչության նիստը, վեճի առարկան,

Եվ վիրավորված դառը վերհուշից՝

Նա պատասխանեց.

- Ընորհակալ եմ, ընկեր Երազիկ,

Լավ ծեծից հետո միշտ լավ են քնում:

Եվ երեխայի խոռվկան տեսքով, Թորգոնը դժգոհ

Բարձրադիր տնից ցած իշավ արագ:

Անփույթ սուլոցով անցնում էր հանդարտ շորորվող այզով

Ամառնամուտի զեփյուոր բարակ:

## II

Թորգոնն իշավ: Աչքի առաջ

Գյուղն էր փովել թևատարած՝

Ծանոթ այնքան և անձանաշ:

...Չկան արդեն տներն այն խեղճ,

Խոնավ, մթին ու ծխախեղդ,

Կրված, թերված իրար վրա՝

Մեկը վերև, մեկը՝ ցածում,

Մեկը մեկից խարիսուլ ու ծուռ...

Հյուղակներն այն, որոնց վրա

Փովում էր մի համատարած,

Խարիսուլ կտոր – բարձր մի տեղ,

Մի տեղ ցածր. կտոր, որտեղ  
Որ վերսից դիտող մեկին  
Պիտի թվար մի անսխտեմ  
Ինչ-որ շենքի անկապակից  
Չվերծանվող հատակագիծ...  
Կտորներն այն, որոնց վրա  
Խոտն էր աճում դեղնականաչ,  
Կտոր, որտեղ ծուռտիկ մեջքով,  
Իր իսկ տեսքից ինքն էլ դժողի,  
Խոտի դեզն էր թառում, որի  
Ավելի խեղճ օրինակը՝  
Ծուռտիկ դեզը չոր աթարի  
Զարդարում էր տան նեղ բակը...  
Իսկ ճեղքերից խարխուլ դոան  
Ներս էր խուժում մայրամուտին  
Հոնդացող քամին լեռան՝  
Ստիպելով պառավ տատին  
Սոսնձի տեղ խմոր քսել  
Այդ ճեղքերին լայնաքերան  
Ու փակցընել նրանց վրա  
Ինչ-որ քղթեր դեղնած ու սև՝  
Չիմանալով, որ իր ձեռքին  
Էջերն են հին ժամագրքի...  
Անց է կացել քանի՞ տարի:  
Իսկ հապա դու շուրջդ նայիր:  
Նոր քարաշեն տներն ահա  
Իրենց արձակ պատշգամբով,  
Այզիներն սաղարթն ահա՝  
Ալիքավոր իրենց քմբով.  
Լայն խճուղին, որ գետի պես

Հեռվից եկել ու վարարել,  
Նեղ ու ծուտիկ քուշաների  
Կերպարանքն է ջնջել տարել:  
Եվ դպրոցին հապա նայիր՝  
Տուֆաքարե այս հսկային,  
Նայիր կալին կոլխոզային,  
Որ այնպես է հարթված ու լայն,  
Ասես լինի մեծ քաղաքի  
Օդանավի արձակ կայան:  
Եզրին նրա, իրար հանդեպ,  
Մեծ ու Փոքր Մասիսների  
Խստաբարո հայացքի դեմ,  
Բարձրանում են երկու մեծ դեգ,  
Ի՞նչ դեգ: Կարծես մեկը դիտմամբ  
Մտածել էր խոտից սարքել  
Մեծ ու Փոքր Մասիսների  
Հսկայական երկու մակետ...

---

### III

Իրարանցում է գոմերի առաջ:  
Ասես ողջ գյուղը քնից վեր թռած  
Ոտքի է ելել, հավաքվել այնտեղ:  
Դեռ առավտոր չի բացվել կարգին,  
Լոկ հորիզոնն է սփրբնել տեղ-տեղ,  
Մինչ քարափներում, լանջերում լեռան  
Գիշերվա մութն է դեռ նստել հանգիստ:  
Վաղ առավոտվա մթնոլորտոր ջինջ  
Լցված է հիմա հազար ձայներով:  
Դոփելով հողը իր սմբակներով՝

Չիլ խրխնջում է հովատակ մի ձի,  
Եվ կարծես դաղված այդ հզոր կանչից,  
Տրտինգ է տալիս զամբիկը շահել՝  
Պատրաստ մոտակա սարերն արշավել:  
Հարևան գոմում՝ հորք, երինջ ու կով,  
Եվ փոքր-ինչ այն կողմ՝ հոտք ոչխարի:  
Այնտեղ էլ արդեն այծի մկմկոց,  
Հորթերի բառաշ ու մայուն գառի:  
Եվ մեծ զարթոնքից այդ աղմբկալի  
Նույնիսկ արևն է քնից արթնանում,  
Ու մնաց մարդիկ, որ արդեն վաղուց  
Ոտքի են ելել, գնում են գալիս:  
- Շուտ արա, ա'յ մարդ, օրը ճա՞շ դառավ, -  
Ամբողջ կալով մեկ զիլ ձայնն է թնդում  
Նորից Հեղուշի, որ ամեն տարի  
Դանդաղելու մեջ մարդուն կշտամբում,  
Շտապեցնում է, ինքն էլ շտապում,  
Եվ ամեն տարի (դարձել է առած)  
Յայլաղ է հասնում ամենից առաջ:  
Իսկ նրա մարդը, հայտնի գառնարած,  
Որ հանգերով է շատ հաճախ խոսում,  
Եվ այդ պատճառով կոլխոզում նրան  
«Առանց քյամանչի աշուղ» են ասում,-  
Հենց այդ խոսքին է կարծես սպասում.  
- Օրը ճա՞շ դառավ, օրը ճա՞շ դառավ...  
Ա'յ դու երեսուն տարեկան պառավ,  
Դու եղ քո ստով գլուխս տարար:  
Թե ճաշ չի դառել, թող դառնա խաշի՛լ,  
Էլ բավակա՞ն է, հոգիս մի՛ մաշիր:  
Ես չունեմ քեզ հետ էլ ոչ մի հաշիվ:

Ոչօրն է հինը, ոչ էլ Արտոն.

Իմ շալակի տեղ՝ ահա ԶԻՍ ավտոն:

Դե, խնդրես նստիր, ուր կուզես քշիր,

Եվ բող, որ Արտոդ իր հոտը քշի...

Պատճառելով ուրախ ծիծաղ՝ իսկոյն Արտոն

Իր գառների հոտն է քշում սարահարթով:

Ոչխարների հոտերն արդեն հավանաբար

Կես են անու յայլաղ տանող սարի ճամփան:

Այզաբացին ոչ նախիրն է մնում տեղում,

Ոչ ձիերի երամակը:

Այսպես՝ զյուղում

Երբ արտերում հասկակալած

Իր ճտերով հավն է կորչում,

Երբ դաշտերում ծաղիկ-կանաչ

Խոտհնձի են մարդկանց կոչում,

Երբ կարող են նախիր ու հոտ,

Չունենալով արձակ արոտ,

Ամեն վայրկյան տալ մի վնաս,

Բերան զարկել ցորեն-զարուն, -

Տերմաները զյուղը բողած

Դեպի յայլաղ են բարձրանում:

Եվ մինչ Արտոն խոսքից հետո իր հարգալից

Անմիջապես հոտն է շարժում ուլ ու գառի,

Մեքենավար Արշավիրը ԶԻՍ-ն է իսկոյն գործի դնում:

Կրվոր կանայք աղմկում են, կանչում, գոչում՝

Խլացնելով անգամ ձայնը մեքենայի:

Երեխերը բովուում են ավտոյի շուրջ՝

Խանգարելով սրա-նրա շտապ քայլին:

Կիսով բարձրած ԶԻՍ մեքենան

Զբաղեցնում է մեկ-մենակ

Հեղուշն իր յոթ տղաներով:  
Դե ի՞նչ կասես, ին հասարակ  
Կրվոր չէ նա, այլև արդեն  
Տե՛ս. «Մայրական փառք» ստացած  
Հերոս մի մայր,  
Որի համար  
ԶԻՍ-ն էլ քիչ է, եթե կուզեք:  
Դե, ինքներդ ահա տեսեք:  
Յոք երեխա՝ իրար նման,  
Ասես ելած լոկ մի ձվից,  
Նոյն մազերը՝ սարի նման,  
Նոյն աչքերը՝ ծովից ծավի,  
Հազուստներն իսկ իրար նման՝  
Նոյն կտորից ու նոյն ձևի:  
Յոք երեխա՝ յոթն էլ տղա  
Եվ յոթի մեջ՝ ոչ մի աղջիկ:  
- Դե պատճառը հենց էդ եղավ, -  
Հեղինեն է մեկ-մեկ բացվում, -  
Ուզում էի ծնվի աղջիկ,  
Բայց ծնվում էր նորից տղա,  
Նորից էի բախտս փորձում,  
Եվ եղանակ էլ աղջիկ շեղավ...  
Եվ Հեղինեն շրջապատված  
Իր յոթ կայտառ տղաներով,  
Գլխին կապած կապոյտ լաշակ,  
Հազին գոգնոցը սպիտակ,  
Իր աչքերով մեծ ու վծիտ  
Ծիծաղում է շարաճճի...

## IV

Յայլաղ տանող ճամփան բանուկ  
Ասես երկինք է քեզ տանում:  
Զգվում է նա ոլորվելով,  
Մեկ՝ ընկնելով, մեկ ելնելով.  
Կախվում է նա կիրճի վրա՝  
Ասես նրա խորքն է շափում.  
Թառում է նա լանջին լեռան՝  
Ասես խաղում «տափուկ-տափուկ».  
Հետո կատարն է բարձրանում՝  
Ասես մի պահ շունչ է առնում  
Այն կալաչափ տափարակին,  
Ուր երբ արևն է խոնարիվում,  
Թվում է, թե ձեռքդ պարզես  
Կհասցնես արեգակին:  
Եվ շնայած արևն այդքան  
Մոտ է թվում այդ կատարին,  
Բայց և այնպես բոլոր տարին  
Նրա վրա ձյուն կա ու կա:  
Սարն էլ հսկա գնդի նման  
Կլոր՝ ասես հղկված ձեռով,  
Հասկանալի այդ պատճառով  
Գնդասար է կոչվում հիմա:  
Հեղուշն արդեն տեղ է հասել,  
Եվ չուզելով զուր սպասել  
Ուշ մնացած ընկերներին,  
Կապոցներն է քանդում-հանում,  
Իր դույլերն է լավ լվանում՝  
Աշքի տակով հետևելով

Ճլվացող տղաներին,  
Որ աղմուկով, ուրախ ճիշով  
Կանաչների, սեղի միջով  
Թռչկոտում են, ծաղիկ քաղում,  
Ընկնում, ելնում, տարված խաղում:  
Մկրտիչն է հասնում շուտով  
Վրնջացող իր աշխետով:  
-Քարև՝, Ճեղո՛ւշ:  
-Հազա՞ր բարի...  
-Քարի գալո՛ւստ, ընկեր վարիչ...  
-Քարի լո՛յս Ձեզ:  
-Քարո՛վ հազար...  
Ու դեռ շանցած մեկ-երկու ժամ,  
Տեղ են հասնում բոլորն արդեն:  
Չանցած ևս մեկ-երկու ժամ  
Տեղավորվում, հանգստանում  
Սա՛ հոլիկում, նա՛ վրանում  
Ու ելնում են նորից ոտի՛  
Սպասելով մեկն իր հոտին ,  
Մեկը՝ դարձին իր կովերի,  
Որ գալիս են, ձգվում վերից:  
-Ո՞նց վերջացավ, ընկեր վարիչ,-  
Բոլորի տեղ հարց է տալիս  
Ճեղուշը, երբ իրիկնանում  
Ու հոտերը դաշտ են գնում:  
-Ոնց վերջացա՞վ: Առաջվա պե՛ս, -  
Մկրտիչն է պատասխանում: -  
Թորգուն էլի չի հասկանում,  
Մեղադրում է և՛ ինձ, և՛ քեզ,  
Որ մենք կյանքի հետ չենք գնում,

Ես ենք մնում:

-Թող ի՞ր մասին ,

Իր պալատի մասին խոսի:

-Խոսում էլ է, ի՞նչ ես կարծում,

Բա քարցնել էլ հո չի փորձում:

Եվ զրոյցը դառնում է լուրջ՝

Պտտվելով անցյալ օրվա

Կոլվարչության ժողովի շուրջ:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ՄՏԵՐԻՄՆԵՐԸ

### I

Ողջ շրջանը գիտեր նրանց՝

Ե՛վ Մկրտչին, և' Թորգոնին,

Իբրև երկու շատ մտերիմ

Ու հինավորց բարեկամի:

Ապրած զյուղում այս միևնույն

Եվ համարյա հասակակից՝

Մտերիմներ էին նրանք

Պատանության վաղ հասակից:

Մեկտեղ տարել բատրակության

Ծանք ու դժվար օրերը հին,

Մեկտեղ էին նրանք հասել

Սովետական մեր օրերին:

Եվ մոտ երկու տասնյակ տարի

Հնկերները այս մտերիմ

Մեկտեղ էին գործում, բանում.

Մինչ Թորգոնը կոլխոզն էր միշտ

Մկրտիչը նոյնքան տարի

Աշխատում էր իբրև վարիչ  
Այն ֆերմայի, որի համար  
Գժովել էին ոչ թե երեկ,  
Այլ դեռևս անցյալ տարի:  
-Չէ, որ այդպես է, ախալքեր ջան, արի  
Կոլխոզ վարչության նիստ հրավիրենք,  
Այնտեղ դու վեր կաց առաջարկդ արա,  
Թե չէ քո տան մեջ և տնավարի  
Այս եղանակով... - Թորգոմը մոայի  
Ընդհատեց խոսքը, երբ անցած տարի  
Իր միտքը հայտնեց Մկրտիչը նրան:  
-Նիստ հրավիրենք, թե ուզում ես դու,-  
Ու Մկրտիչը շուտ ոտքի ելավ,  
Թորգոմն իր հերթին շփոթվեց.  
-Դե լա՛վ,  
Դու գոնե, եղբայր, թեյդ պրծնեիր:  
-Ծնորհակա՛լ եմ... Դե՛, ցտեսություն...  
Նոյն միտքը կրկնեց Մկրտիչը նիստում.  
-Ձեր աչքի առաջ տասնյոթ տարի  
Ես աշխատում եմ ֆերմայի վարիչ:  
Շա՞տ քան է փոխավել- քայլել ենք առաջ,  
Գյուղը դարձել նոր ու անճանաչ:  
Շատ քան է փոխավել: Բայց իմ կարծիքով  
Չենք կարող լինել ֆերմայից մենք զնի:  
Դեռ աշխատում ենք մենք տնավարի.  
Նայում ենք հորթին, ուլին ու գառին  
Այնպես՝ մի տեսակ կիսախուփ աչքով...  
Վերցնենք ոչխարը: Մեր խեղճ ոչխարից  
Մենք հն չենք կարող կաթի ծով կթել:  
Իսկ բուրդը հապա՝ չորս -հինգ սամաթել:

Իսկ բո՞ւրդը... Դա էլ զաղտնի՞ք է միթե:  
Յուրաքանչյուրը ձեզանից գիտե,  
Թե անցյալ տարի քրդի մթերման  
Պլանը ինչպես կատարեց ֆերման:  
Ի՞նչ պիտի անենք հապա այս տարի,  
Եթե կոլխոզը թերակատարի...  
-Ի՞նչ է մնում, որ ի՞նչ անենք, -  
Ոտքի ելավ նստած տեղից:  
Դանել քեռին ու ձայն տվեց,-  
Ուրիշ հնար ու ճար չունենք:  
Մկրտիչը վրա բերեց.  
-Անցյալ ձմեռ մեր կարճատև դասընթացում  
Ես իմացա, որ մի հայտնի պրոֆեսոր  
Հայաստանի սովխոզներից մեկում այսօր  
Մթերատու մի ոչխար է արդեն բուծում:  
Այդ ոչխարը դիմացկուն է ցուրտ ու շոգին  
Այնպես, ինչպես մեր տեղական ծանոթ մաքին:  
Եվ ամենից գլխավորը՝ տալիս է բուրդ,  
Որ և՛ առատ է քանակով, և՛ կիսանուրբ:  
-Ո՛չ, դա ճիշտ չէ, ոչխարները լավ քրդատու  
Նախ՝ կարնով չեն, հետո՝ բնավ չունեն դմակ,-  
Բացականչեց իր աթոռից թորգոմն ազդու,-  
Մեզ հիմարի տեղ մի դնի, մենք էլ մի քիչ  
Խելքի կտոր ունենք, այո, ընկեր Միկիչ:  
-Դա նոր ցեղ է, ավելի շուտ՝ մի նոր տեսակ  
Ե՛վ դիմացկուն, և՛ կրկնակի մթերատու,-  
Շարունակեց Մկրտիչը հանգիստ ու սառ,  
Նախազահի հուզմունքն ասես չէր նկատում:  
Այն ընդգծված միտումնավոր սառնությունից  
Նախազահը է՛լ ավելի խիստ տաքացավ,

Եվ Մկրտչի խոսքը կիսատ՝ թռավ տեղից,  
Խոսքի համար թույլտվություն դեռ չստացած.

-Չէ, ընկերներ, ես այս խնդրում...  
-Ինչո՞ւ տեղից,-

Ոտքի ելավ այդ ժողովում նախազահող  
Եղյան Կարոն:

-Ներողություն, ձայն եմ խնդրում:

Չէ, ընկերներ, ես այս խնդրում

Համաձայն չեմ մեր վարիչին,

Մեր հարգելի Մկրտչին:

Ես չեմ ուզում վիրավորվել,

Այլ խոսում եմ անկեղծորեն:

Դատում է նա ոչ թե իբրև

Մի դեկավար կոլխոզային,

Այլ լոկ իբրև մենատնտես,

Մի մասնավոր տանտիրոջ պես:

Նա վարիչն է մեր ֆերմայի

Եվ ուզում է, ձգտում ֆերման

Ամեն ձևով առաջ տանել՝

Մոռանալով հաշվի առնել,

Թե կոլխոզի, գյուղի համար

Որքան էժան-թանկ կնստի:

Նա սխալ է դատում, ըստ իս:

-Ինչո՞վ եղավ անօգտակար,

Որ մենք, թորգո՞մ, անցյալ տարի

Հինգ ցեղական ցուլեր բերինք,-

Ասաց Մկրտիչն հաշտարար:

-Քո ցուլերով գլուխ տարար,-

Փակելով դուռը հաշտության՝

Ասաց թորգոմը բարկությամբ,-

Յուլեր թերինք և դրանով  
Քո ֆերմայի հարցը փակվեց:  
Յուլեր-ցուլեր գլուխ տանում,  
Եղբայր, արդեն համն ես հանում:  
Երեկ՝ ցուլեր, այսօր՝ ոչխար  
Ինչ-որ կիսափափուկ բրդով,  
Իսկ էզուց էլ մեկ էլ տեսար  
Քո սահմանած այդ լավ հերթով  
Եկար հասար մինչև անզամ  
Ինչ-որ կիսա-անզորական  
Այծի... Եղբայր, խնդրեմ ասա,  
Կոլխոզային ֆերմա՝ է սա,  
Թե՛ տոհմային կայան.

### Հետո

Խնդրեմ էդ քո էծերը թող  
Եվ մտածիր, ընկեր անզին.  
Մեր առաջ կա ավելի մեծ  
Եվ լուրջ խնդիր, շայրենիքին,  
Պետությանը և ամենքիս  
Հա՛ց, հա՛ց է պետք:  
Պետք է երբեք  
Մենք այս բանը չմոռանանք  
Եվ մեկընդմիշտ լավ հասկանանք.  
Գլխավորը հա՛ցն է, հա՛ցը  
Եվ ոչ թե զառն ու մաքին:  
Ես այսպես եմ դնում հարցը,-  
Մեր պետությունն ու մեր պարտիան,  
Որ որոշում են ընդունել  
Երկու ու կես ամիս առաջ  
Ո՛չ թե հորթի, ուլի, զանի,

Այլ ցորենի և հաճարի՝  
Հա՞ցի մասին, հացի՞:  
Ահա՝,  
Ես այսպես եմ նայում հարցին:  
-Նայիր, շատ էլ լավ ես անում,  
Մենք էլ այդ լավ ենք հասկանում:  
Իսկ ինչ կասես բրդի մասին,-  
Ասաց Հեղուշը բարձրաձայն  
Եվ ձեռք մեկնեց, որ խնդրի ձայն:  
Ոտքի կանգնեց Կարոն սակայն:  
Եվ նա խոսեց կարճ ու հակիրճ:  
Չուր չէ, որ դեռ նրա հազին  
Համազգեստն է զինվորական:  
Միջադեպից ֆինլանդական  
Մինչև օրը հաղթանակի  
Բացակա է եղել զյուղից,  
Կտրվել է ջրից-հողից,  
Նույն այդ հողի-ջրի համար  
Անցել հազար հոդ ու ջրից,  
Դադվել ցրտից, խաշվել հրից:  
Երկրորդ օրը վերադարձի  
Կարոն իսկույն կպավ գործի:  
Կոլխոզիկի հոգին նրա  
Կարոտել է արտ ու մարգին:  
Նշանակվեց բրիգադավար  
Եվ մեծ սիրով կպավ գործի:  
Յուցանիշներն անցյալ տարվա  
Ողջ շրջանում դդրդացին.  
Իր մշակած բրիգադի  
Մեկ հեկտարից Կարոն տվեց

Քսանիինգ ցենտներ հացահատիկ

(Երբ խոստացել էր տասնըվեց),

Նա հերոսի կոչման հասավ:

Ողջ երկիրը նրան տեսավ

«Սովետական Հայաստան» – ում՝

Կրծքի վրա – զինվորական

Շքանշան- մեդալների մյուս կողքին

Ամրացված Ոսկե Աստղն աշխատանքի:

Եղյան Կարոն նույն ժամանակ

Քարտուղարն էր և պարտկոմի:

Ու սկսեց երբ նա խոսել,

Երակների մեջ Թորգոնի

Արյունն այնպես արագ հնսեց,

Որ նա կարմրեց միանգամից:

Հավատում էր նա Եղյանին,

Համոզված էր, որ նա իրեն

Մկրտչի դեմ կպաշտպանի:

Սակայն Կարոն այլ կերպ խոսեց,

Խոսեց ազդու, ոգևորված.

-Այնպես կոնկրետ հարց է դրված,

Այնինչ ըն կեր Թորգոնն այստեղ

Իրեն իզուր զցեց դես-դեն:

Գլխավորը հացն է, այո՞,

Մենք այդ գիտենք և լա՞վ գիտենք,

Բայց Մկրտիչն այստեղ մի՞թե

Հարց դրեց նման ձևով՝

Թե արտերը թողնենք անցել,

Թողնենք խոզան, թողնենք խոպան.

Ո՞վ է նման հարց հարուցել,

Ընկեր Թորգոն, ասեք հապա:

-Դու, սիրելի ընկեր Թորգոն,  
Դու քիչ առաջ Մկրտիչին  
Անվանեցիր մենատնտես,  
Ճիշտ է, ո՞չ լուրջ, այլ հենց այնպես,  
Բարկությունից: Իսկ ինձ համար  
Միանգամայն պարզ է հիմա,  
Որ քեզ բնավ դուր չի գալիս,  
Երբ բացերդ են քեզ ցույց տալիս:  
Մենատնտես... Չէ՛, այս դեպքում  
Պետք է արդեն քեզ մեծարել  
Հենց այդ խոսքով, քե՛զ, սիրելի՛ս:  
Խնդիրն այստեղ ոչ թե մաքուն,  
Ոչ էլ կոնկրետ մեր կոլխոզի  
Մթերմանն է վերաբերում:  
Պետք է նայել մի քիչ հեռու,  
Աշքը պոկել իր սեփական  
Տան նեղ բակից և պետական  
Վերաբերմունք ցուցաբերել:  
Գիտեք, որ մեր ուսապուրլիկան  
Արտադրում է արդեն հրեն  
Մետարս, մահուր: Ի՞նչ եք կարծում,  
Գործարանը իր սեփական  
Հումքը պիտի ունենա՞՝, քե՞...  
Ես կարծում եմ՝ պարզ է արդեն:  
Հացի հարցը մի կողմն է լոկ:  
Պետք է հարցին նայել խելոք,-  
Թորգոնն էլի ելավ ոտքի:  
Բո՛լողը: Շա՛տ լավ, ընկեր անգին,  
Իսկ ի՞նչ կասեք դուք դմակի,  
Իսկ ինչ կասեք հապա մսի,

Իսկ ի՞նչ կասեք կաթի մասին:  
Հը, Մկրտիչ: Թե՛ սիզուցն  
Դու կարող ես մինչև անգամ  
Եվ կաթ և յո՞ւղ բրդից քամել,  
Գուցն միջո՞ց կա զիտական:  
Հապա եղբայր, բարի եղիք,  
Տետրակներդ մի լավ պեղիք,  
Գուցն գտնես:  
Սա, իհա՛րկե,  
Ոչ ծաղրանք է, ոչ հանաք է:  
Բանը այն է.  
Եվ նա ուղիղ  
Դիմեց արդեն ողջ ժողովին,  
Տարակուսանք ու վախ ցանեց,-  
Թե դեռևս կասկած կա մեծ,  
Որ ոչխարից այդ բրդատու  
Իքը շատ քիչ կաթ են կթում...  
-Չես վախեցնի դու մեզ կաթով,-  
Զայն խնդրելով ցուցամատով,  
Հեղուշն իսկույն ելավ ոտքի՝  
Իր յոթերորդ տղան գրկին:  
Մկրտիչը ճիշտ հարց դրեց,  
Կարոն Էլ լավ բացատրեց:  
Ինչ մնում է կաթ ու յուղին,  
Մենք գտել ենք արդեն ուղին:  
Կաթն ու յուղը իբրև կանոն,  
Կովն է տալու հիմնականում.  
Խնդրեմ հաշվեք՝ ամբողջ տարին  
Նոր տեսակի այդ ոչխարի  
Կաթի պակասն ինչքա՞ն է, ես

Խոստանում եմ հենց այստեղ ձեզ.

Իմ կովերի բրիգադից

Լիտր առ լիտր ձեր այդ կաթի

Ողջ պակասը լրացընել:

Եվ ցուցարար եղանակով՝

Երեխային երկու ձեռքով

Ամուր գրկած ուզեց նստել...

Ծափեր եղան այստեղ-այնտեղ,

Եվ շադ եկան ձայներ չորս կողմ:

Իսկ աղմուկը երբ հանդարտեց,

Կարապետի վերջին խոսքով

Վարչության նիստը ավարտվեց:

-Թորգոն ախաղեր,

Դե ձեռքդ բեր,

Ի՞նչ ես թթվել, տո՛, տնաշեն,

Եսպես գնա՝ քեզ կմաշե՛ս,-

Մկրտիչը ասաց նրան՝

Ընկերոջն իր, նիստից հետո:

-Դու լավ կանես, որ ձեռք քաշես

Այդ կատակից: Հիշիր հետո՝

Ծիծաղում է նա լիարոք,

Ով որ վերջում է ծիծաղում,-

Թորգոնն ասաց կծու-կծու,-

Դեռ կա շրջկոն, դեռ կա պարտիա,

Միայն այնտեղ պիտի պարզվի

Ով է հաղթող, ով է պարտված:

-Թորգոն, եթե հույսդ այն է,

Որ մեր պարտիան դեռ այդ մասին

Չունի պլան կամ որոշում,

Միտդ պահիր ինչ եմ ասում.

Դրան երկար չես սպասի:  
Հարցը շատ է հասունացել,  
Միայն դու ես քնով անցել…  
-Դեռ սպասիր, հոգուդ մատադ,  
Շրջկոմ գնանք առավոտ վադ,-  
Տեսնենք ով է քնել անցել,-  
Ասաց Թորզուն սպառնական,  
Եվ թողնելով անպատճախան  
«Գիշեր բարի», «ցտեսություն»,  
Քայլերն ուղղեց դեալ իրենց տուն: